

գամնոր բան դիտելով . Են անթիւ պատկերներուն մէջը , որոնցմով թէ խորանները և թէ գմբէթներն ու կամարները զարդարուած են , գրեթէ չես գտներ մէկ նկարած պատկեր մը . ամէնքն ալ միւսիոնագործ մանր քարերով շինուած են՝ որ տեսնողը չձանչնար : Ոէ թէ միայն պատկերները , այլ և զարդարանքներն ու խորաններուն գոգնոցները , բոլորն ալ միւսիոնագործ շինած են . անանկ որ աս եկեղեցւոյն մէջը կրակ իշնալու ըլլայ նէ , սեղաններու սփռոցներէն ուրիշ բան չգտներ այրելու :

Եհաքեզի աս խելքէ մտքէ վեր տաձարին ստորագրութիւնը , որ չտեսնողին երազի մը պէս կ'երենայ : Ու թէ պէտ Ենգեայ մարդարէին խօսքը “ Ենծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն „ , հոգեռորապէս առնելու է սուրբ եկեղեցւոյն վրայ , բայց թէ որ նիւթապէս ալ առնելու ըլլանք նէ , Աղողոմոնին տաձարը ոչ ասկէց մեծ և ոչ ասկէց հարուստ կրնայ եղած ըլլալ . ինչու որ եթէ անիկայ ոսկւով պատած ալ էր նէ , վերջապէս ոսկին դին մը ունէր . իսկ աս երեկէլի ձարտարներու հրաշակերտ պատկերներն ու արձանները , որ սուրբ Պետրոսի ժամուն պատերն ու գմբէթները կը պատեն , գին չունին . անանկ որ Ենգիհացիք աս արձաններուն շատին ծանրութեամբը ոսկի ու զեր են վճարել՝ զանոնք գնելու համար , ու չեն կրցած գնել :

*

Կրօնը այնպիսի մեծ բան է , որ եթէ ոմանց մութ երևալով չուզեն աշխատիլ ու քննել , արժանապէս զուրկ կը մնան անկէ :

ՓԱՍՔԱՆ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ուսուցաց բոյնէրը :

Ուսուցաց բոյնէրուն վրայ համառօտ խորհրդածութի՞ մը դրեր էինք Բազմավիպիս մէջ՝ . բայց քանի մը գիտելիք ալ հոս աւելցընենք՝ փափաքելով որ բարեսէր ընթերցողները բնականին վրայ զմայլին ու անկէ իրենց բարոյականին համար խելք սորվին : Եւ յիրաւի . որովհետեւ կը տեսնենք որ նաև Տէրն մեր իր աստուածային խնամքը մեզի ցուցընելու համար , թռչուններուննայեցէք ու խելք սորվեցէք կ'ըսէ : Են անմեղ թռչնիկներէն կրնան սորվիլ շատ ծնողքներ ալ թէ ինչպէս պէտք է սիրեն ու հոգան իրենց զաւկըները . որդիք ալ գէթ անոնց խնամքէն ու գութէն կրնան անդրադառնալթէ իրենց ծնողաց սէրն ու հոգը որչափ է իրենց վրայ :

Ուսուցանները հաւկիթ ածելէն առաջ՝ կը նային որ բոյն մը կամ բնակարան մը շինեն ու պատրաստեն . աս բոյնը շինելու համար մեծ աշխատանքով զանազան նիւթեր կը ժողվէն ու զարմանալի վարպետութեամբ մէկմէկու կը յարմարցընեն . ու բոյնին ներսի կողմը փափուկ ընելու համար , իրենց մարմնոյն վրայի կակուղ ու բարակ փետուրները կը փետտեն ու մէջը կը շարեն : Ես բաներս անանկ զարմանալի յօժարամտութեամբ ու սիրով մը առաջ կը տանին որ ամենեւին դժուարութենէ մը չենյաղթուիր :

Զագերը ելլելէն ետքը անոնց կերակուր ալ պատրաստելու է : Ելլ տեսնենք որ կենդանածինները կաթով կը մեծցընեն իրենց ձագերը , միջաները՝ դեռ հաւկըթէն բոլորովին դուրս չելած ձագը ան կերակրոյն վր